



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

36 ՌՆ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 8 ՕԴՈՍՏՈՍ 1887

ԹԻԻ 3884

ՄԱՐԱԼԱՐԻՍ կը հրատարակուի ի Կ. Պոլիս, ամեն շաբաթ օր, եւ ձեռքէ կը ծախուի 40 ՓԱՐԱՅԻ: Բաժանորդագրութեան պայմանք են՝ Կ. Պոլսոյ համար տարեկան կէս եւ վեցամսեայ՝ քառորդ Օսմ. ոսկի. գաւառաց համար 70 դրշ. եւ օտար երկրաց համար 15 ֆրանք: Բաժանորդագրները զրկելու է առ մատակարարութիւն Սրեկելի եւ Ուստի, Կ. Պոլիս, Ղալաթիա, Նորատունկեան խան:

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Ազգային տեսութիւն. Ընտրութիւն Քաղաքական ժողովոյ. Արհեստք եւ արհեստաւորք ի Կ. Պոլիս. Ա. Ֆիթ-ՎԱՃԵԱՆ. Բիւզնէսիս եւ Կ. Պոլիս. Պ. Տ. Վէյ. Էֆէնտին (ԹԱԼԻԼԷ) Վերջ. Քաղաք. Շաբաթական Լրոց.

ՊՈՍՏԱԿԵՆՈՒՊՈԼԻՍ, ՈՒՐԱԹ 7 ՕԴՈՍՏՈՍ

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

Ի՞նչ է պատճառն որ թուրքիոյ մէջ եւ ոչ մէկ գործ ժամանակին կը գործադրուի. արդեօք մեր բարքերը, մեր սովորութիւնները, մեր անտարբերութիւնը, մեր կլիմայն, մեր ծոյլ բնաւորութիւնն են պատճառ ասոր: Հոտեղը չէ այս պատճառն որոնելու, բայց սա միայն կրնանք ըսել թէ ասոնց ամէնքն ալ առաւել կամ նըւաղ կը ներգործեն հայու վրայ, որով չենք կրնար գնահատել ժամանակի արժէքն:

Ահա ճիշդ չորս շաբաթ է որ Քաղ. ժողովն հրաժարած է եւ տակաւին պիտի ընտրենք նոր Քաղ. ժողովն: Եթէ հրաժարեալ Քաղաքական ժողովն, ինչպէս որ ծրէն է ամեն տեղ, յօժարէր նայն եռանդեամբ վարել ազգային գործերը, մինչև ցընտրութիւն իւր յաջորդին, հոգ չպիտի ընէինք որ այս ընտրական գործը քիչ մը յապաղէր. բայց որովհետեւ կը տեսնենք որ Քաղ. ժողով գումարուած չունի եւ ներկայ փափուկ պարագայից մէջ այսպիսի յապաղում մը փաստակար կրնայ լինել շատ մը տեսակէտով, հարկ կը սեպենք այս խնդրոյ վրայ Ատենապետաց

Դիւանին խորին ուշադրութիւնն հրաւիրել:

Ի՞նչ է ըլլալիք ձեւակերպութիւնն այս ընտրական գործողութեան համար:

Ազգային ժողովոյ ներքին Կանոնադրին համաձայն, Ատենապետաց Դիւանը կը գումարի եւ Պատրիարք Սըրբազանին հետ, խորհրդակցութեամբ կը պատշաճօտէ երկպառակ այսինքն 28 ընտրելիաց ցանկ մը, որ կը ներկայացուի առ Ազգ. ժողովն եւ որոյ մէջէն կը ընտրուի երեսփոխանաց մեծամասնութեան քուէով 14 անձերէ բաղկացեալ Քաղ. ժողովն:

Ատենապետաց Դիւանն արդէն մինչեւ ցարդ. մէկ քանի նիստեր ըրաւ. չենք գիտեր թէ ինչ վիճաբանութիւնք տեղի ունեցած են այդ գումարմանց մէջ, բայց ինչ որ ալ լինին այդ վիճաբանութիւնք եւ պատճառաբանութիւնք, աղոնք կարող չեն արգելել օրինաց գործադրութիւնն որ բացորոշ է Սահմանադրութեան եւ Ազգային ժողովոյ ներքին Կանոնադրին մէջ:

Աւելորդ չենք համարիր յայտարարել, որ ազգին այսօրուան ներքին եւ արտաքին վիճակն եթէ քիչ մը ուշադիր ոգւով քննելու ըլլանք, պիտի տեսնենք թէ պէտք ունինք Նուրեան էֆէնտի ազդեցիկ վարչութեան յետոյ ընտրել այնպիսի վարչութիւն մը, որ գիտնայ ամբողջացնել եւ կարգադրել իւր նախորդին սկսած եւ չաւարտած գործերը, գիտնայ նոյնպէս ազգային իշխանութիւնը. բարձրացնել եւ զօրացնել առաջնորդական վիճակները բարեկարգել, Տէրութեան հետ եւ ի մասնաւորի Պալատան հետ մեր յարաբերութիւններն աւելի բարւոյր վիճակի մէջ դնել, դաստիարակութեան խնդրոյն ամենամեծ ուշադրութիւն դարձնել, միով բանիւ պէտք է աշխատինք ընտրել այնպիսի վարչութիւն մը որ միայն իրեն հոգածութեան առարկայ ընէ մեր ներքին եւ գաւառական գործերը:

ԱՐՇԵՍՏԷ ԵՒ ԱՐՇԵՍՏԱԻՈՐՔ

Ի Կ. ՊՈԼԻՍ

Ինչպէս կենսական շահեկանութիւն ունեցող բազմաթիւ նիւթերու, նոյնպէս եւ արհեստից վրայ տեղեկութիւն մը տուող չունինք: Մեր հրապարակադիրք կարելի է ըսել թէ երբէք չեն խօսիր արհեստից վրայ, կամ լաւ եւս ըսած կ'ըլլանք եթէ ըսենք որ արհեստաւոր կամ արհեստագէտ հրապարակադիրներ չունենալու դժբաղդութիւնն ունինք:

Մեր պատերն իրենց ունեցած արհեստները մեզ աւանդեցին այն նահապետական վիճակին մէջ յոր իրենք ստացել էին իրենց կարգին: Յառաջդիմութեան վերջին դարերուն մէջ հայ արհեստաւորք կատարեալ անտարբերութեամբ տեսան իրենցմէ անհամեմատ անընդունակ եւ վայրենութենէ նոր ելած ազգերու հսկայական զարգացումն եւ եղբւր որ տակաւին կը շարունակուի մեր մէջ այդ սպանիչ անհետաքրքրութիւն եւ մեռելական անշարժութիւն: Չենք գիտեր մինչեւ ցերբ պիտի երթանք այսպէս: Հեռու չէ ժամանակն յորում քաղաքակիրթ աշխարհը բոլորովն պիտի հալեցնէ իւր մէջ ինչ որ յամառութեամբ կը կենայ անշարժ եւ չմասնակցի իւր եռացող դարգացման:

Որովհետեւ մեր խօսքը մասնաւորապէս Կ. Պոլսոյ արհեստից եւ արհեստաւորաց վրայ է, դառնանք եւ տեսնենք թէ, արհեստք ի՞նչ ուղղութեամբ կ'ընթանան, զարգացման ի՞նչ աստիճանի վրայ են եւ հաւանականաբար ի՞նչ պիտի ըլլան ի վերջոյ:

Առաջին հարցման պատասխանը վերն ըսինք:

Երկրորդինը գէոս:

Երրորդինը գէոսէն պակաս:

Հայերն ամեն դար, ամեն ժամանակ, արհեստաւոր ժողովուրդ եղած են եւ կը շարունակեն մնալ արհեստաւոր: Ասոր համար ահա Հայք կան եւ կը մնան միշտ քանի կը շարունակեն արհեստագործ մնալ. սակայն ոչ թէ վերն ըսուածին պէս մեռելական անշարժութեամբ: Հիմա այլ են ժամանակներն եւ իրենց հանգամանքներն, այլ արհեստներն եւ նոցա արդիւնք, եւ այլ կենցաղներն եւ անոնց պահանջք: Ուրեմն բաւ չէ ըսել որ մենք, Հայքս, արհեստաւոր ենք. նահապետական արհեստն ոչինչ է. հիմա զարգացման մրցումը ստակալի է, վայ յաղթուողին: Արհեստագործ գոյով էր որ մեր գոյութիւնը պահպանել կրցեր ենք. այժմ, եւ ասոր շնորհիւ հայն ստացեր է ահագին կորով եւ հաստատամտութիւն յամառութեան տնտիճան: Մի հայ տաղանդաւոր հրապարակադիր կ'ըսէր օր մը թէ հայը քառաչուէ զանգուած մ'է







ասանք թէ գիտուն եւ կրթեալը ալ բոլորովին կ'անգոստեն արհեստագործութիւնը . շատ բնականաբար կը հետեւի ուրեմն որ արհեստը չեն կրնար առաջդիմել : Կ. Պոլսոյ արհեստաւորը այս աննպաստ հանգամանքներէն զատ իրենց վարպետէն գործնականապէս ուսած բոլոր արհեստն , երեսանց , վեր ի վերոյ , հարեւանցի եւ անհաստատ կը սովորին . ցննողական ոգին երբէք զարգացած չէ նոցա մէջ . ոչինչ խոր , ոչինչ լուրջ , ոչինչ հմուտ է նոցա մօտ . նոքա իրենց մանկութենէն , տունէն սկսած այդպէս կը վարժին եւ գիտութեամբ է որ Կ. Պոլսոյ արհեստաւորը շատ մանուածապատ եւ խոր մտածութեան ամենեւին չեն դիմանար , չուտով կը վնասին , չուտով կը յոգնին եւ կը լքեն այդ կերպ նեղիչ աշխատութիւնը . կը շարունակեն իրենց վարպետին սովորածն առաջ բռնել : Հեղինակելու , բարձրանալու , հոգով հանելու միտքեր , նախաձեռնողութիւնն երբէք չկան Պոլսեցի արհեստաւորին քով : Ամեն արհեստաւոր երթակայաբար կ'ընթանայ եւ իւր սեփական ետը նոր բան մը , զրուծելուն մը չըստեղծեր կամ ճիշդ եւս ըսենք չկրնար ըստեղծել :

Այսպէս թերի եւ անհիմ դաստիարակութեան մի անախորժ եւ սպանիչ հետեւանքն ալ այն կ'ըլլայ որ , մեր արհեստաւորը այն ինչ քիչ մը կարող կ'ըզան զինքեանս արդէն , կ'սկսին հաշուել թէ կատարելութեան ծայրն հասած են եւ ոչինչ կը մնայ տակաւին ուսնելու համանագէտին : Այսպէս անձնագաստանութեամբ անգոստելով իմ քո խելքը , կուրացած կը կենան միշտ եւ միշտ նոյն կէտին վրայ :

Ա. ՖԵԹՎԱՃԵԱՆ

## ԲԻԻԶԱՆԴԻՆՆ ԵՒ Կ. ՊՈԼԻՍ

Ներսէս Պատրիկ հայկազն թաղաւոր Գոթաց . — Ներսէս պանծալի յաղթող Գերմանացւոց . — Ներսէս ինքնակալ Հռոմայ — Հռոմայ Պապը Ներսէսի ոտքը կը դնէ . — Մօրիկ Ա . հայկազն կայսր Բիւզանդիոյ . — Մուշեղ Մամիկոնեան . — Բաժանումն կաթողիկոսութեան Հայոց . — «Մօտա-Պուռնու»ի պատմական մեծ յիշատակը . Մահ Մօրիկ կայսր . — Ներսէս մեծ զօրավար Յունաց :

Լուկոյցիք չափազանց ուրախացան Ներսէսի այս վեհանձն երողաւորութեան համար : Ոմանք կ'ուզէին քաղաքը նոյն ժամայն յանձնել , իսկ ոմանք ոչ : Իսկ Ներսէսը տեղով նոցա այս երկմտութիւն գոչեց նոցա . «Այսուհետեւ հոգս չէ որ չհասնայ ձեր սիրտն եւ չկարեցայ խորտակել ձեր խտուրթիւնն : Ապա նիգակը ցոյց տալով նոցա , յարեց . «Միայն սա պիտի նուաճէ ձեր հպարտութիւնն» : Իւ արգարեւ սաստիկ պաշարու մէ յետոյ առաւ քաղաքը : Սոյն միջոցին Գոթաց Ազիզերնոս թագաւորը Կոնս քաղաքի բանալիներն բերաւ յանձնեց Ներսէսի եւ անձնատուր եղաւ նմա . . . Ներսէս սոյնպէս տիրելով Գոթաց , Դասուեցաւ նոցա թագաւորաց կարգի մէջ , թէեւ իւր Ներսէս եղաւ Գոթաց թագաւորութեան կործանիչն : Այսօրինակ մեծապանծ յաղթանակներէ յետոյ Ներսէս կը բնակէր ի Հռոմ իւր ինքնակալ հռոմէական նախկին մեծագոր կայսրութեան : Երբ Ներսէս բոլորովին խորտակեց Գոթաց զօրութիւնն ,

այնուհետեւ Գերմանացիք սկսան արշաւանք գործել . սակայն Ներսէս որպէս անյաղթելի միշտ , այդ անգամներ եւս մնաց անյաղթելի . մանաւանդ թէ հարկ է յիշատակել որ յաղթական զօրագունքը գրեթէ միշտ հայ . հայն զբաւ զանազն էր ըստ վկայութեան նոյն իսկ յոյն պատմագրաց : Տակաւ առտակաւ պատերազմը մեծ երեւոյթ կ'ատանար Ներսէսի եւ Գերմանացւոց միջեւ . մինչեւ որ վերջապէս հասաւ մեծ պատերազմն որի մէջ Ներսէս մեծագոյն յաղթութիւն տարաւ : Աղաթիսա կը գրէ թէ աներեւակայելի կոտորած կը կրէին Գերմանացիք Ներսէսի ռազմագիտական ճարտիկութեան շնորհիւ . ամեն ուրեք կը տեսնուէր սոսկալի կոտորած : Սպանուածներու արեան յորդութենէն դաշտավայրերն ողողուած էին հեղեղի պէս . իսկ այնտեղ եղող դետն , գիականութեան կոյտէն չկարենալով շարունակել իւր ընթացքն , ջուրը եզերքներէն դուրս կ'երնէր : Այս պատերազմի մէջ ընկաւ եւ Գերմանաց Բուտիլինոս մեծ սպարապետը . նորա զօրքերէն ողջ մնացին հինգ հոգի միայն , իսկ Ներսէսի բանակէն սպանուեցան լոկ ութսուն շանձիւնք :

Ներսէս փառաց յաղթանակաւ վերադարձաւ Հռոմ միաբարբառ զօրասանական խօսքեր լսելով եւ հիացման արտայայտութիւն տեսնելով ամեն կողմէ : Ներսէսի այս քաջութիւնն այնչափ մեծ եղաւ , որ Աղաթիսա կ'ըսէ . «Գիտար չէ ինձ հաւատալ թէ անցեալ դարերու քաջերէն եւ ոչ մին «կատարած լինի այնպիսի փառաւոր» հրաւելի եւ մեծահոգի յաղթութիւն գոր կատարեց Ներսէս հայկազն» : Այնուհետեւ Ներսէսի զօրքերն սկսան զեղխութեամբ անցունել իրենց կեանքը : Ներսէս ընտիրաւ տեսնաբանութեամբ — զոր յառաջ կը բերէ Աղաթիսա — կշտամբեց նոցա շուայտուութիւնն . . . : Այս միջոցին Ներսէս իմացաւ թէ եօթն հազար Գոթացիք ամրացած են Կամուլայ բերդի մէջ . արշաւեց այն կողմն եւ պաշարեց ամրոցի շուրջն , մինչեւ որ վերջապէս ամրոցականներն անձարանալով պարտաւորեցան հաշտութիւն առաջարկել : Նոցա Հռեզնար զօրավարն եկաւ հաշտութիւն ընելու , բայց որովհետեւ ամբարտաւանութեամբ կը խօսէր , այդ պատճառաւ Ներսէս մերժեց նոցա հաշտութիւնն ըսելով . «Զմեռ ուզեք այդպիսի հաշտութիւնն , այլ նախ պիտի խոնարհեցնեմ ձեր այդ ամբարտաւանութիւնն եւ ապա պիտի տիրեմ ամրոցին» : Արդ արեւ քիչ ժամանակէն զրաւեց բերդը :

Ներսէս սոյնպէս ահաբեկ ընելով Գոթացիներն եւ արեւմտեան Եւրոպիոյ բազմաթիւ ազգերն , ստացաւ անպակելի անունն : Այնուհետեւ տիրաբար կ'իջնէր Իտալիոյ մէջ եւ իւր կայսր կը թագաւորէր ի Հռոմ մինչեւ 15 տարի : Որչափ ժամանակ նա կը գտնուէր ի Հռոմ , կ'ըսէ Անաստաս զըրապետը , բովանդակ Իտալիա յարազուարժ խնդութեան մէջ էր : Սիրելի էր ամեն մարդու :

Զոնարաս , Կեդրինոս , Անաստաս եւ այլ մատենագիրներ կը պատմեն թէ Յունտիրենիանոս մեծի մահէն յետոյ երբ բիւզանդական գահակալն եղաւ Յունտիրենոս փոքր , պալատականներն սկսան չարախօսել Ներսէսի նկատմամբ . . . : Յունտիրենոս հաւատալով նոցա խօսքին խիստ պատգամ զըրկեց Ներսէսին իշխանութիւնը ձեռքէն առնելով , իսկ Սոփիա թագուհին եւս մի նամակով կը գրէր Ներսէսի . «Եկ հիմա ալ կանանց հետ բուրդ մանէ» :

Ներսէս իրողութեան անտեղեակ սաստիկ կը վշտանայ եւ պատասխան կուտայ թագուհւոյն . «Այնպիսի մանած մը պիտի մանեմ քեզ , որի ծայրն ո'չ դու պիտի կարողանաս գտնել եւ քակել եւ ոչ կայսրն» : Եւ զայրացմամբ ելնելով Հռոմէն գնաց Նաբոլի եւ իմաց տուաւ Լոնդոնարդացւոց , որ վայրենի եւ անողորմ ժողովուրդ մ'էին , գալ եւ տիրել Իտալիոյ : Եւ նոքա 200,000 մարդոցմով արշաւեցին Իտալիա յուզելով ամբողջ երկիրն : Հռոմի Պապն Յովնանէս Գ . փութաց Նաբոլի աղաչեց Ներսէսի որ երթայ երկիրն ազատէ Լոնդոնարդացւոց ձեռքէն . սակայն Լոնդոնարդացիք արդէն ամրապէս հաստատուած էին համայն Իտալիոյ մէջ . Ներսէս զիջաւ Պապի աղաչանաց , եւ գնաց Հռոմ եւ մի քանի քաղաքներ ազատեց Լոնդոնարդացւոց ձեռքէն : Ներսէս մեռաւ 372ին . մարմինը դրուելով արձնեայ տապանի մէջ մեծ պատուով բերուեցաւ Կ. Պոլիս : Բազմատմամբ յոյն եւ լատին պատմիչներու գրածին մեծն Հայկազնի մասին , այս գրուած շատ համառօտ եւ չոր է : Սակայն այսչափն եւս կը բաւէ մասամբ հաստատելու համար այն կարծիք թէ բիւզանդական կայսրութեան քաղաքական ասպարէզի վրայ առաջնակարգ դեր խաղացած են հայերն : Յառաջիկային պարբերաբար պիտի ներկայենք Բիւզանդիոնի հայազգի կայսերաց կենսագրութիւնն եւ քաջութիւններն , որ ակներեւ ապացոյց պիտի լինին վերոյիշեալ կարծիքի ճշմարտութեան :

Վերոյիշեալ այլ եւ այլ պատմական իրողութիւններէ յետոյ այժմ կը հասնինք այն կէտն ուր ակներեւ կը փայլի Հայոց կարեւորագոյն նշանակութիւնը բիւզանդական կայսրութեան քաղաքական կենաց մէջ , եւ իւր անպայցոյ կը բաւէ ըսել թէ Բիւզանդիոնի գահի վրայ բազմած են 16 կամ ըստ ոմանց 18 հայազգի կայսրներ , որոց կենսագրութիւնը կարելի եղածին չափ մանրամասն պիտի ախտատինք յառաջ բերել աստ : Սակայն նախ քան այդ , կարելի է գիտել տալ որ այդ կայսրներ ըստ վկայութեան յոյն պատմագրաց իրենց պալատի եւ բանակի մէջ ունեցած են բազմաթիւ հայ իշխաններ եւ զօրապետներ , եւ մինչեւ իսկ հայ սպարապետներ եւ հայկական զօրագունքեր . արդեօք կատարելապէս հաւանական չէ՞ կարծել թէ այդ հայազգի կայսրեր իրենց մայրաքաղաքը գաղթել տուած կարող են լինիլ եւ բազմաթիւ հայ ընտանիքներ , որովհետեւ արդէն մատենագիրները բացորոշապէս կը յիշատակեն շատ հայ իշխաններ որ ընտանիքով կը բնակէին Կ. Պոլիս : Սակայն թողունք այդ կէտ , որ ապա պիտի հաստատուի բացորոշապէս , եւ դառնանք հայազգի կայսրաց , որ ընդհանրապէս բարձրիգլուխ կը փայլին Բիւզանդուհի կայսրաց շարքի մէջ իրենց պաշտօնավարութեամբ :

## ՄՕՐԻԿ

Հայազգի առաջին կայսրն եղաւ Մօրիկ կամ Մաւրիտիոս , որ առաջ Յունաց արեւելեան զօրաց սպարապետն էր : Այս սիրոցին յոյները մասնաւոր գիտութիւն ունենալով Պարսից հետ , Տիբերիոս կայսրն հրաման զրկեց Մօրիկի կազմ եւ պատրաստ պահել իւր զօրքն : Երբ Պարսից Որմիզդ Բ . թագաւորը չափանց իւր դաշինքն , այն



ժամանակ Մօրիկ իւր հետ առնելով և Փոքր Հայոց զօրաց մի մասն յարձակեցաւ Պարսից վրայ եւ յաղթեց նոցա ու արտաքսեց արեւմտեան Հայաստանէն: Մենանդր, Թէոփանէս, Բուզանդացի, Եւադր մեծանուն եկեղեցական պատմիչն, ժամանակակից եւ այլ յոյն պատմագիրներ, որ գրած են Մօրիկի կենսագրութիւնը, կը պատմեն թէ երբ Մօրիկ մեծ յաղթութեամբ վերադարձաւ Կ. Պոլիս, Տիբերիոս կայսրն պատուով ու փառքով մեծարեց զնա եւ փեսայացուց իրեն եւ նոյն տարի իւր մահուան ժամանակ յանձնեց նմա յունական կայսրութիւնն, որովհետեւ, ըստ մատենադրաց, գիտէր թէ նա կորովի եւ խնայական մարդ մ'է: Եւ արդարեւ Դուստասի վկայութեան համեմատ Մօրիկ իւր իշխանական աթոռը նստելէն յետոյ աւելի եւս ցոյց տուաւ այլ եւ այլ քաջագործութիւններ եւ առաքինական գործեր, Դուստաս ապա կը յաւելու. «Չերկուս իրս իրերաց ներհականս զորս յանձին կրէր, ընդ միմեանս գեղեցիկ յարմարեալ շարալծեաց, զգերապանծ վեհանձնութիւն ոգւոյ, եւ զբարեգործ գթասիրութիւն, զերծ ամենայն ամբարհաւածութենէ եւ ի բարձրայօնութենէ»: Մօրիկի հայ լինելուն կը վկայէ ի մէջ այլոց նմանապէս եւ Յովիլ յոյն ժամանակագիրը. նոյն բանը կ'աւանդէ եւ Ստեփանոս Ասողիկ, աւելցնելով թէ նա Արագածօտն գաւառի Օշական գիւղէն է. իսկ Կիրակոս Փանծակեցի կ'ըսէ թէ ոմանք կ'ըսեն թէ Օշական գիւղէն է, այլք՝ Տարօնէն, եւ ոմանք եւս Կապադովկիայէն: Ասողիկ կը յաւելու դարձեալ. «Ի Կոստանդնուպոլիս գտնով նորա, խնամ ամէր գեղջն իւրում (Օշականայ) եւ այս արդարացուցանէ զառասպելին՝ որ ասեն, աստի յՕշական խուկ առաջիս: Նմանօրինակ բան մ'եւս կը պատմէ Կիրակոս Փանծակեցի ըսելով թէ Մօրիկ մարդիկ կը զրկէ իւր հօր գալ եւ վայելել իւր որդւոյն փառքն, եթէ ոչ գոնէ խրատ մը տալ տէրութիւնը բարձր կառավարելու համար: Կայսեր սպասաւորներն երթալով Օշական կը գտնեն ծերունին պարտէզի մէջ եւ կը յայտնեն նմա կայսեր հրամանն: Իսկ նա կը պատասխանէ. «Ինձ չը վայելէր պերճանալ իւր հայր ինքնակալի»: Այս ըսելէ յետոյ կ'սկսի պարտէզին մէջ եղած մեծամեծ կաշառներն արմատախիլ ընել, գլուխները կտրել եւ ծածկել հողի տակ: Նոցա փոխաբէն կը դարմանէր նորատունկ եւ վտիտ կաղամբները: Կայսեր մարդիկը կարծելով թէ բախուցած է ծերունին, կը թողուն, եւ կ'երթան պատմել կայսեր, ինչ որ տեսան: Մօրիկ լսելով այդ, ժպտեցաւ եւ բան չյայտնեց մարդու, այլ այնուհետեւ հետամուտ եղաւ հեռացնել մեծամեծներէն մի քանին, որ մեծնալով ճոխաբար, դաւաճանութիւն կը նիւթէին իւր դէմ: Եւ նոցա տեղ կարգեց ստորաստիճան եւ հաւատարիմ մարդիկ. ապա իւր մօտ կանչելով իւր սպասաւորներն ըսաւ. «Ահա այս էր հօրս խրատն զոր ցոյց տուաւ ձեզ պարտիզին մէջ, եւ դուք չհասկցաք»:

Դիտողութեան արժանի կէտ մ'է թէ առաջին հայ կայսրն մեծն Կոստանդիանոսէն հաշուելով բիւզանդական իշխանութեան տասն եւ իններորդ կայսրը կը համարուի: Դիտողութեան արժանի պարագայ կը համարուի այս, որովհետեւ Մօրիկ կայսերական գահ կը բարձրանայ այն ժամանակ երբ դեռ եւս հասած չէր խառնակութեանց եւ արիւնհեղութեանց դարերջանք՝ կայսերական գահը ձեռք բերելու գիտու-

մով: Միւս կողմէ առաջին հայագրի կայսրը բաց ի այս առաւելութենէ, կը փայլի եւ իւր օրինակելի կառավարչութեամբ: Նա կայսեր տեղակալ անուանեցաւ 572 թ. գոտոս 3-ին, իսկ մի եւ նոյն ամսի 15-ին թագադրուեցաւ կայսր Բիւզանդիոյ: Ըստ վերջապետեան Թէոփանէսի, Զոնարասի, Կեդրինոսի, Ճաւրնտիւրի եւ, Մօրիկ հայկազն թագաւորելուն պէս բազմութիւն բարեկարգութիւններ ըրաւ: Քաջութեամբ եւ իմաստութեամբ խաղաղացուց Յունաց աշխարհն եւ առաւել եւս Հայաստան աշխարհն այն մասն որ կը գտնուէր իւր իշխանութեան ներքեւ: Մօրիկ այնքան լաւապէս անդորրացուց իւր տէրութիւնն որ այնուհետեւ շարունակաբար առակ դարձած էր ըսել թէ «Մօրիկի ժամանակուան պէս նստած ես անհոգ»:

Մօրիկի ժամանակ կար հզօր եւ երեւելի մարդ մը՝ Մուշեղ Մամիկոնեան որ շատ քաջագործութիւն ըրած էր Կայսեր մայրաքաղաքի, նմանապէս եւ Հայաստանի մէջ: Մօրիկ ասոր յանձնեց յունական զօրքը Կրոս զօրավարի հետ միասին, նոյնպէս եւ հայկական առանձին գունդ մը, եւ պատերազմի զրկեց Պարսից դէմ: Մուշեղ զիմելով Պարսից վրայ մեծ քարք տուաւ նոցա Նիսիսի գետի մօտ, որ կը թափի Տիգրիսի մէջ: Սակայն Կրոս զօրավարը նախանձելով Մուշեղի յաղթութեան վրայ, Թէոփանէսի ըսելով, թիկունքը դարձուց եւ քաջուեցաւ պատերազմի ճակատամարտէն: յունական միւս զօրքերն եւս չիփոխուելով սոյն պարագայէն սկսան փախուստ տալ: Սոյն պատճառաւ Մուշեղ Մամիկոնեան նախ յաղթուեցաւ, այլ ապա յաղթեց: Սոյն միջոցին սաստիկ խռովութիւն կը տիրէր Պարսկաստանի մէջ. Որմիզդ թագաւորը գահընկեց լինելով սպանուեցաւ իւր Խոսրով որդիէն, այլ Խոսրով եւս հայրասպանութեան պատճառաւ լքուեցաւ իւր զօրքերէն եւ Վահրամ Նիբորձէս պարսիկ ապստամբ զօրավարի հետ պատերազմի բռնուած ժամանակ յաղթուեցաւ ու սկսաւ փախչիլ... իրեն օգնութեան կոչեց քրիստոնէից աստուածն, ապա դիմեց Մօրիկ կայսեր օգնութեան: Մօրիկ խոստացաւ օգնել եւ շատ զօրք ժողովելով յանձնեց Ներսէս կրտսերի հրամանատարութեան եւ պատգամ գրկեց Մուշեղ Մամիկոնեանի, որպէս զի զօրք ժողովէ հայերէն եւ զօրավար լինի Խոսրովին: Այս տեղ հարկ կը համարինք յիշատակել թէ այս Ներսէս կրտսեր Ներսէս Բասեղի որդին էր. առաջ Յուստինոս կայսեր զինակիրն, ապա այն պատիւը վայելեց եւ Մօրիկէն: Ներսէս, ըստ վկայութեան յոյն մատենագրաց, չքեղաշուք տեսքով եւ հանձարեղ մտքով մարդ մ'էր, այնպէս որ ժամանակակից Կորնելիոս բանաստեղծն իւր ոտանավորներու մէջ յայդ «էջէ կ'անուանէ զնա»:

Յունական սոյն արչաւանքն, որի բոլոր զօրավարներն ու ընդհանուր հրամանատարը հայեր էին, հասաւ Հայաստան եւ միանալով Մուշեղ Մամիկոնեանի զօրաց հետ, կազմեցին 70,000 անձինք: Խոսրով իւր զօրքը բաժնեց երեք մասի, միին գնդի հրամանատարութիւնն ինք առաւ Ներսէսի հետ. ձախ թեւն յանձնեց Մուշեղ Մամիկոնեանին հայկական զօրքով, Պատերազմի յաղթանակը կատարեալ եղաւ. Խոսրով յաղթելով իւր թշնամեաց վերստին թագաւորեց չնորհիւ Մուշեղ Մամիկոնեանի քաջագործութեան: Խոսրով պատերազմէն յետոյ մեծ պատուով մեծարեց Ներսէս սպարապետն: Իսկ Մօրիկ կայսեր եւս ի

փոխարէն երախտագիտութեան նուիրեց Դարա եւ Մծրին քաղաքները:

Քաղկեդոնի ժողովի խնդիրն, որ երկար տարինեքէ ի վեր երկպառակութեան պատճառ մ'եղած էր Հայոց եւ Յունաց միջեւ, վերստին սկսած էր յուզուիլ Մօրիկ Կայսեր օրով: Արբաշամ Կաթողիկոս մուրադական համարելով Քաղկեդոնի ժողովն չէր ուզէր որ վրացիք ընդունէին զայն. սակայն երբ վրացիք Կիւրիոնի խորհրդով ընդունեցին այդ ժողովն, այն ժամանակ Արբաշամ կաթողիկոս մեծ ժողով գումարելով նզովեց զԿիւրիոն, նզով կարգաց եւ նոցա, որ խնամութեան, վաճառականութեան եւ այլ գործոց մէջ հաղորդակցութիւն ունենային վրաց հետ: Ահա այս ժամանակէն, այն է 596 ին վրացիք որոշակի բաժանուեցան հայերէն: Այս առթիւ Մօրիկ կայսեր աւանջը շատ ամբաստանութիւն հասնելով, նա կը հրամայէ ժողով գումարել ի Կ. Պոլիս, եւ կը հրաւիրէ այնտեղ Հայոց եւ Յունաց եպիսկոպոսներն: Արբաշամ կաթողիկոս կը զրկէ իւր աթոռակալն Վրդանէս վարդապետն եւ Գրիգոր վարդապետն. ուցա հետ կ'երթան ուրիշ տասն եւ ինն եպիսկոպոս Յունաց բաժնի Հայաստանէն: Ժողովի ժամանակ Հայոց եպիսկոպոսներն ընդունեցին Քաղկեդոնի ժողովն. իսկ Գրիգոր եւ Վրդանէս չհաւանեցան ու ետ դարձան: Այս պատճառաւ մեծ չիփոխութիւն ընկաւ Յունաց եւ Պարսից բաժնի Հայոց մէջ, եւ տեւեց երեք տարի: Այս նկատմամբ Մօրիկ կայսրն իւր բաժնի հայերն որոշեց Արբաշամ կաթողիկոսի հետ զանդուութենէն, եւ որպէս զի առանց կաթողիկոսի չմնան, նոցա կաթողիկոսն նշանակեց Յովհան անուի բարի մարդ մը Կոզաց գաւառի Բագարան գիւղէն: սոց ժողովի կը նստէր Կոստայր գաւառի Աւան գիւղաքաղաքի մէջ: Այս պարագայ առիթ տուաւ աւելի սաստիկ դժուրութեանց, երկու մասի Հայոց միջեւ, որ տեւեցին մինչեւ Յովհան կաթողիկոսի մահը:

Մօրիկ իւր իմաստուն եւ բազմարդիւն կառավարութեամբ համարուեցաւ Բիւզանդիոյ կայսրութեան լաւագոյն ինքնակալներէ մին: Սակայն այդ սիրեցեալ կայսրին, փոխանակ քնակալն մահուան, վիճակեցաւ եղբորական սոսկալի մահ մը: Մօտա-Պուլսիոսի հրուանդանն, որ կը կազմէ Քաղկեդոնի մի մասը, վայրկեան մը աչքէ կը ծածկէ այն մարմանդն ու գեղատեսիլ ծովախորշն որ կը գտնուի Ֆէնէր-Պազլէի եւ Եօտա-Պուլսիոսի միջեւ եւ որ երբեմն կ'անուանէր Եւտրոպիոյ նաւահանգիստ: Այս անունը կը յիշեցնէ Բիւզանդիոյ վատագոյն զօրավարէ մին: այս մի եւ նոյն նաւահանգստի մէջ է որ կատարուեցաւ այն եղբորական դէպքն ում զոհ գնաց Մօրիկ հայկազն կայսրը: Փոխառանուն յոյն զօրավարն անյուստի յեղափոխութեանց շնորհիւ յանկարծակի կը բարձրանայ: Եւ Մօրիկ, տէրութեան այդ պատելի կայսրը, լքեալ ամենէն, եւ տեսնելով իւր մայրաքաղաքը լի ապստամբութեամբ, ծպտեալ կը փախչի պալատէն: Կայսրուհւոյն եւ որդւոց հետ եւ նաւակ կողմը: Բուռն հուլը կը մղէ նաւակը Աւտոնոմ ամալի եկեղեցւոյն մօտ, ոչ հեռի Նիկոմիդիայէն: Այստեղ փախտական կայսրը բռնուելով իւր ետեւէն ընկած զինուորներէն, կը բերուի Մօտա-Պուլսիոսի այդ խորշն: Այնտեղ կապեալ ձեռքով ու ոտով կը բաշտեն մինչեւ ծովեզրն իւր պատի եւ իւր մայրաքաղաքի հանդէպ: Այս



բանն եղաւ նոյեմբերի տխուր առաւօտ մը։ Սոյն անարգանաց վրայ կ'ընէ թէ ուրիշէս, երբէք չթուլացաւ նա իւր արութեան եւ ջերմեանդ կորովի մէջ, այլ ձեռք փրկիսու- փայլէր իւր գծազդու թեան մասին։ Աւե- լի սոսկալի աստիճանաց հասցնելու համար նորա տանջանքն ու վիշտը, Փոկաս նորա աչքի առաջ դիտարկել տեսաւ նորա հինգ կայսերազն որդիներն. եւ կացինի իւրա- քանչիւր հարուածին անմեղ զոհերու արիւ- նը վարդազոյն սոսկալի ցողով կը ծածկէր ծերունի հօր դէմքն ու ամբողջ մարմինն։ Իւրաքանչիւր որդւոյ մահուան պահուն Մօ- րիկ հայեացքն ուղղելով դէպ երկինք կը մրմնջէր անսահման հաւատով։ Արքայ էս Գո- Տէր, եւ ուղիւ է Գաղատիոյ Կրտսեր գաւալը դեռ տղայ լինելով դայեակը կը թաքնէ զնա եւ նորա տեղ դահիճին կը մատուցանէ իւր իսկ զաւակը։ Մօրիկ երբ տեսաւ տիրաւոր մօր այս դիւցազնական անձնութիւնը, չկարողացաւ հանդուր- ժել որ իւր որդւոյն փոխանակ ուրիշը զոհ- ակ, այլ բացարձակաբար յայտնեց. «Իմ որդին չէ այդ» եւ հրամայեց իւր հարա- զատ դաւակն յանձնել Փոկասին։ Մատաղ մանկան խոցիւղութեամբ ժամանակ կաթը ցայտելով անկէ թրջեց դժբաղդ հօր վըշ- տահար դէմքն, ըստ վկայութեան բազմա- թիւ ժամանակագրաց...։ Ապա ինքն Մօրիկ եւս իւր գլուխը մատոյց դահիճին, որ ի ներկայութեան անհուն բազմութեան կացինի մէկ հարուածով թոցուց նորա ճերմակ գլուխն իւր սիրելեաց խարտի- շագեղ ու արիւնքաթաթաւ գլուխներու մէջ։ Վեց դիակները նետուեցան ծովի մէջ, այլ ալիքներէն ծովափ մղուեցան մի քանի անգամ. այս պարագայ տարիք տուաւ սը- նապառա՞ծ Բիւզանդացւոց զիտելու թէ «մին- քեւ անգամ բնութեան տարրերն իսկ չեն ուզեր մեզսակից լինիլ այսպիսի մեծ եղեր- նագործութեան»։ Մօրիկ 20 տարի 3 ամիս եւ 25 օր թագաւորեց, այն է մինչեւ 602ի նոյեմբեր 27ը։ Մօրիկ իւր որդւոց աղե- տալի մահը տեսնելէ յետոյ երբ ինքն եւս պիտի սպաննուէր, վերջին անգամ եւս իւր աչքերը վերցուց դէպ երկինք եւ անսահ- ման հաւատով մրմնջեց վերստին. «արդար ես դու Տէր եւ ուղիղ է դատաստան քո»։ Նորա մարմինն ապա թաղուեցաւ Մամանտ եկեղեցւոյ մէջ։ Երեք տարի յետոյ գլխատ- ուեցաւ Մօրիկի կինն իւր միացեալ երեք զաւակներով, դարձեալ Քաղկեդոնի մէջ Եւտրոպիա նաւամատոյցի մօտ։

Ահա այսպիսի եղերական մահ ունեցաւ Բիւզանդական կայսրութեան առաջին հայ- կազն գահակալն։ Սակայն կը գրեն Սիմո- կետրա, Զանարաս, Կեդրինոս, Անաստաս եւ այլ մատենագիրներ, Փոկաս անպա- տուհաս չմնաց. որովհետեւ Խոսրով Պարսից թագաւորը սաստիկ տխրեցաւ իւր բազմե- ռախտ բարերարի այս մահուան պատճա- րաւ եւ որոշեց, վրէժ տանել Փոկասէն։ Այս մի եւ նոյն ժամանակ Փոկասէն ապստամ- բեցաւ Ներսէս Յունաց մեծ զօրավարն՝ Ներսէս Բասենցիի որդին՝ եւ գնալով ա- ռաւ Նդեսիան եւ լուր զրկեց Խոսրովին յարձակիլ Փոկասի վրայ խոտանալով ինքն եւս ձեռնառն լինիլ նմա։ Եւկ, եւ արշա- ւենք այդ անողորմ մարդու վրայ, որ չխը- նայեց իմ տիրոջս եւ քու ալ երախտաւո- րին։ Կը գրէր Ներսէս առ Խոսրով։ Տակա- լին Խոսրով չհասած Ներսէս արդէն պա- տերազմի բռնուած էր Փոկասի հետ. Փո- կաս տեսնելով որ անհնար է նուաճել Ներ- սէսն, իւր մօտ կանչեց զաւաճանութեամբ

ու սուտ երգումով, եւ ողջ ողջ այրեց քա- ջարի հայկազն զօրավարն «եւ այս» կը գրէ թէ ուրիշէս յոյն պատմիչն՝ եղեւ անտանելի տրտմութիւն ազգիս մերոյ, քանզի յան- ուանէ նորա սարսափէին ամենայն թշնա- միք մեր, որպէս եւ Պարսիկը իսկու։

Սակայն Խոսրով Աշոտ Բագրատունիի հետ եկաւ յարձակեցաւ Փոկասի վրայ եւ հասաւ Գառը գիւղ, ուր ամեն ինչ կողոպ- տելէ յետոյ Աշոտի հետ միասին վերա- դարձաւ Հայաստան։

Պ. Տ.

Է Փ Է Ն Տ Ի Ն

(6)

(ՆՈՐԱԷՊ)

Երեւակոյցեցէ՛ք, Ս. Հարք, ըսաւ, կին մը, ինձ նման թշուառ կին մը որ թէպէտ զաւակ մը կը կրէ իւր բազկաց մէջ, այլ կէս ամուսն ամուսնական կեանք մը հազիւ թէ ունեցած է. այդչափ կարճատեւ։ Երեւա- կոյցեցէ՛ք, կ'ըսեմ, ողորմելի տարած մը որ իւր ամուսնութեան առաջին լուսինն ան- գամ սեւ քօղով մը գիտելու անբաղդու- թիւնն է ունեցած իւր կեսրայրի յանկար- ծական մահուան...։ Կամ սպանման պատ- ճառաւ, եթէ կ'ուզէք։

Տասն եւ հինգ երկար ամիսներ են որ ծնողքս յանձնած են զիս վայրագ ճիւղի մը ճիրանաց. այդ օրէն սկսեալ թշուառու- թեան դազաթնակէտն հասած կրնամ հա- մարիլ ինքզինքս. ըսր թէ՛ ամուսնութենէս երկու շաբաթ յետոյ կորուսի կեսրայրս. ամիս մ'ալ եւ ահա կսկիծն ու ցաւեր ա- ոին տարին կեսուրս ալ իւր տարաբաղդ ամուսնոյն քով եւ ես մէն միայնակ, անօր անօգնական, զուրկ կենաց ամենահարկա- ռօր պիտոյքներէ իսկ. մնացի այդ տան մէջ տակաւին ամիս մ'ալ երբ այդ ճիւղին իւր յօշոտիչ ժանիքներով քաշեց զիս հող կէ- դուրս եւ փռեց սաւայառակին վրայ։

Ի՞նչ կրնայի ընել. ծնողացս քով դառ- նալ. բայց անոնք չպիտի ընդունէին զիս. այսպէս ըսած էր հայրս, Պաղտասար աղան, նոյն իսկ ամուսնութեան օրն։ Այգային Հիւսնդանոցը դիմել. բայց հոն տեղ չի շնորհուիր ինձ նմաններու։ Անձնասպա- ն լինիլ ո՞չ, սոսկալի էր այդ երբ կը խորհէի մանաւանդ թէ դահիճը պիտի ըլլայի ան- մեղի մը զոր յիս կրէի։ Վերջապէս Բարձ- րելոյն գթութեան ապաւինած՝ բարեկա- մուհեացս միոյն շնորհիւ գնացի վարձի այն խարխուլ տնակն՝ որոյ աւերակաց ներքեւ, սակաւիկ մի եւս, պիտի թաղէի կեանքս ու պատիւս։

Այդ օրէն սկսեալ չէի տեսներ այլ եւս զինքը. թերեւս, կ'ըսէ, ինքնիրենս շատ անգամ, ժամանակն եւ այս կարեկցու- թեան արժանի վիճակս, քաղցրացներն իւր օրտի դառնութիւնն եւ ճշմարտը խո- տովանելու համար, տակաւին գինքն օր մը տանս սեմէն ներս տեսնելու յոյսն չէի կո- րուսած բողբոջիլ։

Այլ աւա՛ղ, կ'անցնէին օրերն եւ ամա- ներ եւ ո՛չ որ կուգար բաղինիլ տանս դըռ- նակն. ո՛չ որ կուգար տեղեկանալ թէ ո՞ղջ կամ մեռած էի. դրացուհի մ'ուշէի միայն տարիքոտ, ազնիւ եւ առաքինի կի՛ր մի որ շատ անգամ կուգար իւր այցելութեամբ ու սփոփիչ խօսքերով մխիթարել զիս. շատ օգտակար եղած է ինձ իմ անձկութեան

ժամերու մէջ եւ առանց երախտագիտա- կան արտասուօք թանալու աչերս, երբէք չեմ կարող յիշատակել իւր անունը. նա էր՝ որ դայեակն եղաւ Հրանտիս, նա էր՝ որ ծը- նընդաբերութեանս երկիւղալի օրերու մէջ խնամեց զիս եւ շատ անգամ ողջոյն գիշեր- ներ հսկեց անկողնոյս քով. նա է՝ որ աշ- խատութիւն կը հայթայթէ ինձ չոր հացի մը ստակը ճարեւու համար եւ վերջապէս նա է որ զիս կը խնամէ այժմ։ Այլ սակայն հակառակ այդ բարի ու առաքինի կնոջ ջերմ հոգածութեան, քանի՛ օրեր անցուցած եմ նօթի ու ծարաւ եւ քանի՛ գիշերներ առանց կարենալ գլուխս հանգչեցնելու բարձիս վրայ։

Մենդարբերութենէս յետոյ տկարութիւնս օր ըստ օրէ սկսաւ ծանրանալ. կար կարե- լը՝ քար կրելէ աւելի տաժանելի աշխատու- թիւն մը դարձաւ. այս դողոց մատանցս համար եւ քիչ մը եւս ու պիտի մեռնէիք անսուաղ։

Ճարահատեալ եւ յուսահատ մէկ երկու ամիսներ առաջ այնս գթութեան ու ար- դարութեան առեւինն դիմեցի որ մարդ ա- սիրաբար չզլացաւ մխիթարիչ խօսքերով եւ քաջալերիչ որոշումներով սփոփել զիս. այլ աւա՛ղ, այդ որոշումներ՝ աւելի տառական եղան քան իրական։

Ահ, կուգեմ մեռնիլ, ի բոլոր սրտէ կ'ու- զեմ մեռնիլ. բայց ու՛էք, որո՞ւ թողում, որո՞ւ յանձնեմ այս անմեղ հրեշտակս, այս հոգեոյս հատորը զոր այնչափ գուրգուրա- նօք կը սիրեմ եւ որոյ տկար ու փափուկ թաթիկներ զօրաւոր եղած են շատ անգամ խելու ձեռքէս այն դաշոյնը զոր սիրած եմ սիրտս մահել։

Ահ, եթէ կարենայի, հրաշիւք լին, մի քանի օրուան մէջ մեծցած տեսնել զինքն եւ ես լինէի աւելորդ եւ անօգուտ ոմն իրեն համար։

Այս անմեղին ծածոն աւելի արցունքս է քան կաթս. այլ սակայն կը տեսնէք թէ՛ երկինք ինչպէս պահպանած են զինքն, ո՛ր- չափ առոյգ ու կայտառ է եւ ո՛րչափ սի- րուն ու ժպտուն. կարծես տարբեր աշ- խարհի մը մէջ կ'ապրի նա, կարծես ուրիշ մայր մ'ունի այդ իւր անմխիթար մօր միակ մխիթարանքն։

Անցեալ շաբաթ օրն էր, երեկոյեան ժամը մէկին մօտ տնակիս դուռը զարնուե- ցաւ, ցաւաքեցի իսոյն տեղէս եւ մէկ ակն- թարթի մէջ յուսոյ եւ լուսոյ փառաւոր ջահ մը կարծես լուսաւորեց մաւր սիրտս ու խաւար տնակս. ահ, ո՞վ է արդեօք եւ ո՞վ կրնայ ըլլալ այս ատեն, անչուստ ծա- նօթ ձեռք մի որ կրցած է մթութեան մէջ գտնել փոքրիկ տնակիս աննշմարելի դուռը. թերեւս ինքն է, մոռացած չէ զիս, բոլո- րովն լքած չէ զիս, կ'ըսէի ինքնիրենս, եւ յուսալից կը բանայի դուռն։

Երկու երիտասարդներ կը գտնեմ գրան- տոջեւ որ շնորհալի եղանակաւ բարեկեղով զիս կ'ըսեն թէ՛ ինքն, -ահ, չեմ ուզեր ան- ուանել զինքն, այդչափ կը սոսկամ. քիչ մը յետոյ պիտի գայ անդանակից ըլլալ ինձ, ի չալէս նաեւ իրենք եւ քիչ մը կանուխ զրկած է ձուկ, պանիր, հաց, պտուղ եւ ուրիշ մի քանի բաներ եւ խնդրած նաեւ որ կերակուրն ու սեղանը կարելի եղածին չափ շատ պատրաստելու աշխատիմ։ Այդ ճանչնում թաշկինակն. ո՛հ, այո՛, իրն է. ու- բարութեան չեմ գիտեր ինչպէս պատա- տանել, ինչպէս շնորհակալ ըլլալ այդ աղ- իւ պարոններու. կը հրաւիրեմ զիրենք սեն- եակը, կը յանձնեմ իրենց գիրք մը, Դուր-



եանի բանաստեղծութիւններն, եւ ներս-  
գաւառութիւնին խնդրելով, կ'իջնեմ խոհա-  
նոց ուր ոչինչ կը գտնեմ. կը վազեմ ծա-  
նօթ, ազնիւ ու բարի դրացուհւոյս որ  
պէտք եղածը մարդասիրաբար կը շնորհէ ինձ  
եւ գրեթէ երեք քառորդի մէջ կը պատ-  
րաստեմ ամէն բան: Այնչափ դժուար կը դ-  
գամ ինքզինքս: Կը պառնամ իրենց քով, կը  
խօսակցիմք միասին եւ մեր խօսակցու-  
թեան գլխաւոր նիւթը կը կազմէ Հրանտիկն  
որ քունէն նոր արթնցած, սովորականէն  
աւելի ուրախ ու զուարթ կը պատուասի, է  
հիւրերս նուիրելով իրենց առատօրէն կար-  
միր կտրմիր խնձորներ:

Անցած է երկու քիւ. ոչ ոք չտեսնուիր  
տակաւին եւ ուրախութեան, անհամբե-  
րութեան ու կասկածանաց խառն զգաց-  
մունք կը պաշարեն սիրտս ու հոգիս. այդ  
պարոններ իւր յապաղման մասին կցկտուր  
միկնութիւններ կուտան ու կը քանան հան-  
դարանցներ զիս, այլ ի դուր. վերջ ապէս  
ժամը երեքը կը հասնի երբ ուժգին հար-  
ուած մը կարծես իր խորտակէ տնակիս  
գուռը. կը բանամ խկոյն, սիրտ ի դուր եւ  
ահա բազմութիւն մը կը խուժէ գոնէն  
ներս. հոն է ինքն, այդ ամբոխին մէջ. ան-  
լուր հայհոյանքներու եւ անուանարկիչ խօս-  
քերու հոսանքի մը մէջ կը խեղդէ զիս, կը  
փութիմ գետնին վրայ, անզգայ, բոլորո-  
վիս անտեղեակ պատուոյս դաւարապէշ  
ծառն արմատախիլ ընող այդ ուրուական-  
էնն . . . . .

Արտասուք, հառաչանք ու հեծեծանք  
կնքեցին իւր պատմութիւն:

Ինչ որ պատմեց տիկինն, ըսաւ վեհա-  
փառ ձայն մը, անկեղծ ճշմարտութիւն է  
այն, այո՛, այդ երկու պարոններ միաբե-  
րան խոստովանած են շատերու, ինչպէս  
նաեւ ինձ, թէ այս տարաբաղդ ու ողոր-  
մելի կնոջ հետ վայրկեան մ'իսկ յարաբե-  
րութեւն չեն ունեցած եւ միշտ իսկ բնաւ  
չեն ծաւցած զիրեն. թէ այս անզգամն  
օղիի շոգուոյ թէ փայլուն ոսկւոյ զօրու-  
թեամբ, լուս չեմ գիտեր, յաջողած է հա-  
մազել զիրենք եւ իրենց անկացութեամբ  
լարել այս գայլակղեցուցիչ որոգայթն որոյ  
մէջ այս թշուառը ձգել աշխատած պահու-  
որդ արութեան ձեռքը զինքն է գլորած:

— Բայց . . . բայց . . . չա՛տ սխալ, ըսաւ  
Միհրանիկ կապալելով, եւ քրտանց խնոր  
կաթիլներ կը թանալին իւր մուկութեամբ ու  
անբարոյականութեամբ կեղտոտ դէմքն:

— Ի՛նչ խօսիր, անզգամ, անիծեալ, ը-  
սաւ ոչ նուազ ահարկու ձայն մը, ականջ  
դի՛ր եւ բիշմար հեռուէն պիտի լսես տա-  
կաւին ուրիշ խել մը հառաչանաց ու հե-  
ծեծանաց ձայներ որք քու պատճառաւդ  
դժբաղդութեան եւ թշուառութեան ան-  
դուկի ի մէջ գլորեալ ողորմելիներու սրը-  
տին խորէն կը թափն: Մուկութեանդ եւ  
անբարոյականութեանդ սեղանոյն առաջին  
ողջակէզը չէ այս հէգ կինն եւ սիրտ մը  
չէ որ կ'արիւնի քեզ համար, այլ սրտեր:  
Միհրանիկ այլ եւս, կը խայտառակեմ զքեզ:

— Վա՛տ անզգամ, ըսաւ նախագահ Սրբ-  
բազման արտասուքութեամբ, տակաւին կը հա-  
մարհակի՞ն, ներկայանալ արդարութեան ա-  
տենի մ'առջեւ զրկելու համար զինքն այն-  
պիսի գուժարէ մը՝ որով թափած արեանդ  
մէկ շիթն անգամ չես կարող գնել. կորի՛ր  
աչացս առջեւէն. որոշումն անդ առնալի է:

Միհրանիկ կատաղած կ'ուզէր խօսիլ բայց  
բարապանք դուրս հանեցին զինքն եւ բ-  
պարսաւանաց ու նախատանաց նետեր չորս  
կողմէն կը վիրաւորէին զինքը:

— Քու պատիւդ փրկուած է այլ եւս,  
որդեա՛կ իմ, ըսաւ Սրբազանն. առտուա-  
ծային զօրութիւնը մեծ եւ անքննելի է եւ  
համբերութիւնը կեանք: Ժամանակը շատ  
հրաշքներ կրնայ գործել:

Գնա՛, աղջիկս, երկինք առողջութիւն  
եւ հանգիստ շնորհեն քեզ:

Զայէլ համբուրեց Սրբազանին աջը  
փղձկեալ եւ Հրանտը սեղմած իւր սրտին  
վրայ, կ'իժու քայլերով հեռացաւ այդ վայ-  
րէն, անբիծ եւ անարատ ճակտով, սիրտի-  
ուած ու քաջալերուած. եւ զնաց իւր ու-  
ժաթափ եւ մաշած մատներով՝ աշխատիլ  
գիշեր ու ցորեկ, ապրելու եւ ապրեցնելու  
իւր գաւաին, սպասելով ժողովոյն արդար  
որոշման զործադրութեան:

9.

Այժմ՝ Միհրանիկ կորուսած է իւր ամ-  
բողջ հարստութիւնն եւ փողոցի սրիկայ  
մ'է պարզապէս:

Կը ցաւի թէ վատնած է իւր ոսկիներն,  
այլ բնաւ չցաւիր թէ այդչափ անմեղներ  
մատնած է թշուառութեան: Այդքան վայ-  
րադ է:

Էֆէնտի չէ այլ եւս:

Սաթինիկ կ'ապրի իւր մօր հետ այն  
տան մէջ որոյ յարկերը խոնարհ չեն այժմ  
իւր կրուկներու համար:

Անպատուութեան եւ անբարոյականու-  
թեան անջնջելի մի աղտ մրոտած է ճա-  
կատը:

Կ'առտասուէ իւր մօր հետ յար անդա-  
դար, այլ ի դուր: Անբարոյականութիւնն  
ու անպատուութիւնն այդ հեղուկով լու-  
ծելի նիւթեր չեն:

Զաւակ մ'ունի զոր կը համբուրէ մայ-  
րական սիրով. այլ դառն են այդ համարյո-  
ւներ. երբէք չեն յագեցներ իւր փափագն  
ու պապակն:

Իւր ընկերուհիք չեն բարեւեր զինքը.  
գիտէ այս անգամ թէ նախանձութենէ  
տարբեր պատճառ մը չ'արգիլէ զիրենք:

Կ'ընարէ մահը քան այս կեանքն:

Եւ Զայէլ կ'ապրի այն տնակի մէջ ուր  
թողուցինք զինքն: Հիւանդութիւնը ծան-  
րացած է. շատ կը հազայ թշուառը:

Պառկած է այլ եւս անկողնոյն մէջ,  
միշտ Հրանտիկը գրկած, զոր կը համբուրէ  
յաճախ իւր չորացեալ ու դալկահար շըր-  
թունքներով:

Բոցակէզ են այտերը. պաղ քրտինք մը  
կը հոսի ճակտէն շարունակ եւ կարծես  
կ'ուզէ մարել այդ հիւծող կրակն:

Ի զո՛ւր . . .

Կենսատու աղբիւրները կաթի կաթիլ  
մ'անգամ չեն պարունակեր, ցամքած են  
բոլորովին ինչպէս ամբողջ մարմինն եւ Հը-  
րանտիկ ձորն արտասուօքը թրջած չոր հա-  
ցի կտոր մը միայն կը կրծէ շարունակ ու  
կ'ապրի միշտ սուղոյ, միշտ գիրուկ, միշտ  
սիրուն, միշտ ժպտուն:

Բարի գրացուհի մը կը հսկէ իւր սնարին  
մօտ որում չէ կարող յայտնել իւր երտխա-  
ղիտութիւնն ու շնորհակալիք: Այնչափ  
նուաղած է ձայնը, Կ'արտասուէ միայն . . .

Անհամբեր կ'սպասէ իւր մահուան, գի-  
տէ թէ անխուսափելի է այլ եւս. Այդ բա-  
րի ու առաքինի կնոջ կը յանձնարարէ իւր  
սրտին հատորն, իւր հոգւոյն հատորը:  
Կ'ուշանայ մահն ու կը տանջէ զինքը.  
չգործանար, զի գիտէ նաեւ թէ բանաս-  
տեղական մահուան սովորական հաճոյքն  
է այդ:

Այո՛, կ'ապրի դեռ, բայց այժմէն կըր-  
նաք նկատել այդ տնակն իբրեւ իւր գե-  
րեզման, որ կը գտնուի հողուն վրայ փո-  
խանակ գտնուելու հողուն տակ:

Չէ՞ք Զայէլ . . .

ԹԱԼԻՆԷ

Վ Ե Ր Ձ

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Շաբթուան հեռագիրը գրեթէ ամբող-  
ջովին եւ թղթատարով առնուած եւրոպա-  
կան լրագիրք մեծաւ մասամբ կը խօսին  
պուլկարական գործոց վրայ որք նոր վի-  
ճակ մ'առացան: Քաղաքիկի Ֆէրտինանտ  
իշխանն հանգիստաւորապէս մտաւ ի Պուլ-  
կարիա, եւ Դրնովայի Ազգային Ժողովոյն  
առջեւ սահմանադրական երդումն ընելէ  
յետոյ, հռչակուեցաւ Ֆէրտինանտ Ա. իշ-  
խան Պուլկարոյ: Երկուշաբթի օրն իշխա-  
նը փակեց Սոպրանիյէն հետեւեալ բանա-  
խօսութեամբ զոր արտասանեց պուլկար  
լեզուաւ. «Տեսաք երեսփոխանք, շնորհա-  
կալ եմ ձեր ցոյց տուած հայրենասիրու-  
թեանն համար: Հայրենիք երախտապարտ  
պիտի լինին ձեզ: Փակեալ կը յայտարարեմ  
ներկայ մեծ Սոպրանիյէն» — իշխանն այցե-  
լելէ յետոյ Դրնովայի մօտ հաստատեալ բա-  
նակետը, Փիլիպէ մեկնեցաւ ուստից Սո-  
ֆիա պիտի ուղեւորի: Ամենուրեք թէ՛  
պաշտօնական մարմինք եւ թէ ժողովուրդն  
եռանգապիս ցոյցեր կ'ընեն ի պատիւ իշ-  
խանին:

Խնամակալութիւնն եւ նախարարու-  
թիւնն հրաժարական տուին, բայց դեռ  
չկազմուեցաւ նախարարութիւնն որում պի-  
տի մասնակցին Պ. Պ. Սղամալուլօ, Մուզ-  
բուրօ, Ժիլօքօ, Նաչէվիշ եւ Թոնշէֆի  
իշխանը Ռահմալայէն հետոյ իւր քաղ-  
վեց առ Վէշ. Սուլթանն, որով իւր ան-  
կեղծագոյն մեծարանքն եւ յարգալից ու  
պարկէշտ զգացմանց հաւաստիքը կը մա-  
տուցանէ:

Ֆէրտինանտ իշխանին Պուլկարիա միտ-  
նելուն առթիւ՝ Ի. Դուռը Ռուսիոյ դես-  
պանատան խորհրդականին եւ Մեծ-Եպար-  
քոսին ու Արտաքին գործոց նախարարին  
մէկ երկարատեւ տեսակցութենէն յետոյ,  
չըջաբերական ծանուցագիր մ'ուղղեց մեծ  
Տէրութեանց՝ անոնց տրամադրութիւններն  
խմանալու համար Ֆէրտինանտ իշխանին ըն-  
թացքին նկատմամբ զոր ապօրինաւոր կը  
հռչակէ: Այս ծանուցագրի պատասխանը  
տակաւին հասած չէ ի Բ. Դուռն: Անգլ.  
բոլոր լրագրաց թղթակիցք միաբերան կը  
հաւաստեն թէ Տէրութիւնք որչա՞ծ են հա-  
յեցողական դիրք մը բռնել պուլկարական  
խնդրոյն մէջ:

— Սերպիոյ Նաթալի Թագուհին եւ Մի-  
լան թագաւորը վերջապէս չհաշտուեցան:  
Թագուհին գտնաժառանգ որդւոյն հետ  
քանի մը տարիներ պիտի բնակի ի Տրէզյան  
եւ ի Շղուդկարտ գերմանական կրթու-  
թիւն տալու նմա:

— ՎՕլարիւքս կոչուած նորահնար լեզ-  
ուին իբրեւ տիեզերական լեզու ծաւալման  
նպատեւու համար, ի Միւնիխ օգոստ. 8ին  
բացուեցաւ ՎՂՂազգային Լեզուի Ժողովոյն:

— Ռուսիոյ հնձոց վրայ առնուած տե-  
ղեկութիւնք եւս քան զեւս գոհացուցիչ են:

— Ռուս լրագիրք զովութեամբ կը խօ-  
սին Շաբթի վաղայի վրայ, որ իւր երկու  
որդիները դրած է Բեդերապուրիկ նաւային  
դպրոցը: Ն. Վսեմութիւնն այնչափ կը սիրէ  
եղեր զՌուսիա, որ իւր գաւառուք վեց  
տարիէ հետէ արդէն ուսուսուցիչներու







# Guerlain de Paris.

15, Rue de la Paix.

ՀԱՍՏԱՐԱԿՐԹԵԱՆ ԿՐ ՅԱՆՁՆԱՐԱՐԵՆԻ ՀԵՏԵԻԵԱԼ ՀՈՏԵԻՏ ՆԻԻԹԵՐԸ Eau de Cologne Impériale. Sapoceti, օճառ արդուզարդի համար Ambrosial cream, օճառուտ քաղցածի մարգարու համար. Crème de Fraises մորթի կակուզցնելու համար. Poudre de Cyprès զովացնելու եւ ճերմկցնելու համար սորթի. Stilboideին ապու համար մազերուն եւ մորու-ըին. Eau Athénienne et Eau lustrale հոտ խնկելու եւ մաքրելու համար գլուխը. Alcoolat de Cochlearia ակուայներու համար. Eau de Chypre արդուզարդի համար: Թաշկինակի համար հոտաւէտ նիւթեր՝ Héliotrape, Pao Rosa, Shore's caprice, Maréchale Duchesse, Marie Christine. 977 6—26

## ԿԱԼԶԻԻ ՄԻՋՈՏՈՍՊԱՆ ՓՈՇԻՆ

ԱՄԵՆԱԶԳՈՒ ԴԵՂ ՍԵ ՄԼՈՒՆԵ-րու, Լուերու, Ոջիւներու, Ճանճերու, Մթեղներու, Մրջիւներու, Թրթուր-ներու, Շորեանի որդերու եւն զէմ:

Քիչոն կը ծախուի 12 ֆրանք. թըղ-թատարութեան միջոցաւ, 100 կրամն 1-93 ֆր. է: Դիմելու է առ է. ԿԱԼԶԻ, 71, Կուստ Կոնստանտին, Լիոն:

Արեւելից համար ներկայացուցիչն է Դեղագործական Միջերանոցն, Դալա-թիոյ Մեծ Փողոց, 35, Կ. Պոլիս:

796

10—10

## ՈՃԻ, ՅԱՆՁՆԱՐԱՐԵՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՌԱՅԻ ԵՒ ՄԱՍՆԱՌՈՐ ԳԻՏԵԼԻԲ ՅՐԱՆՍԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

Աշխարհից

Թ. Թ. ՀԻՆՏԼԵԱՆ

Սոյն օգտակար երկին երկրորդ տետրն եւս հրատարակուած է. կը պարունակէ ֆրանսերէն լեզուին բոլոր ոճերն եւ մասնաւոր գիտելիքներն, հանդերձ օրինակներով եւ մեկնու-թեամբ. կրնայ շատ օգտակար լինիլ ամեն անոնց որք ֆրանսերէնի նըբու-թիւնները կ'ուզեն ուսնիլ. Գինն է 2 զրուշ:

1052

3—4

## ԺԻՒԼ ՎԵՐՆ ՔԱՆ ՀԱԶԱՐ ՓԱՐՍԱՆ ԾՈՒԼԵՐՈՒՆ ՏԱԿ

Թարգմ. Կ. Ս. ԻԻԹԻԻԶԵԱՆ

Ժիւլ Վեյրնի այս հռչակաւոր գործն, որ ֆրանսացի ճեմարանէն պատկուած է եւ զոր մեծ խնամով հայերէնի թարգմանած է Իւ-թիւնեան Կարապետ էֆէնտի, Արեւելի մէջ իբր թերթին հրատարակուելէ յետոյ, այժմ երկու առանձին հատոր կազմած կը վաճառուի ամեն հայ գրաւաճառաց քով իւրաքանչիւր հատորի գինն է 7 1/2 զրշ:

ՆՈՐ ԴԱՍԱԳԻՐԻԲ

## ԹՊԻԱՐԱՆՈՒԹԵԱՆ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ

ԵՐՈՒԱՆԴ Կ. ԳԱՐԺԱԼԵԱՆ

Դասագրք

Չափական գիտութեանց

Ազգային դասատուներէն երուանդ էֆ. Կ. Գարթալեանի սոյն դասագրքն, որ կը պարունակէ թուարանութեան տեսական եւ գործնական մասը միանգամայն, բազմա-մասց փորձառութեան եւ մեծ խնամոց ար-դիւնք է:

Թուարանութեան բոլոր կանոնք կոկիկ եւ դիւրմընելի ոճով բացատրուած են, եւ

մեղրական, շահու եւ վաճառականական հաշ-ւոց վերաբերեալ կանոնք ընդարձակ տեղ մը կը գրաւեն սոյն նոր դասագրքին մէջ:

Բաց աստի, մասնաւոր ուշադրութիւն եղած է որ իւրաքանչիւր կանոնի յարակից խնդիրք թուրքիոյ առեւտրական գործառ-նութեանց եւ առեւտրի կենաց պիտոյից հա-մաձայն ըլլան, առանց որոյ թուարանակա խնդիրք շատ անգամ տաղտկացուցիչ եւ ա-ւելորդ կ'ըլլան:

Հմուտ թուարանին սոյն աշխատասիրու-թիւնը մեր ազգ. վարժարանաց մէկ զգալի պէտքը կուգայ լրացնել եւ բառնալ աշա-

կերտաց ձեռքէն աւանդական դրութեամբ պատրաստուած շատ մը դասագրքանք:

Կը գտնուի ամէն գրաւաճառաց քով. կեդրոնատեղին է Յակոբեան խան, թիւ 14, Եւրոպական գրատուն, Ա. Պիպէնեանի քով:

Գինն է 40 զրուշ

Շատ առնողին մասնաւոր զեղչ կ'ըլլուի. 886 21—50

Վասն Որոշատեան

Տնօրէն-Պատասխանատու

Ս. ՍԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐ. ԱՐԵՒԵԼԻԲ ԵՒ ՄԱՍՍՈ ԼՐԱԳՐԱՑ



## ՄԵՏԵՍ՝ Ս. Ա. ԱԼԼԵՆԻՆ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ ՄԵՐ. ՆՈՐՈՒՄԻՐ

(MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER)

Ճիւղմակ ընկած մազերուն դոյն, վերնիճ ու գեղ կուտայ: Կը նորոգէ անոր կեանքը, դոյժը եւ աճումը: Գլխու թեփը շուտ մը աներկութիւն կ'ընէ: Եւ անուշ հոտը առատ է ու հեշտալի:

“Մէկ շնչը կը բաւէ:” Եւ փորձը ունենան ամենքը որոնցմիտք ունած մազերը իրենց բնական գոյ-նին դարձան, եւ ճաղատ տեղերը մազով ծածկուեցան: Եւ անոնք չեն կ'ուզեն թարմ մազ ունենալ եւ բոլոր կենացը մէջ պահել, առանց ուշանալու շեշ մը ստացիր ԿԵՆՏՐՈՆԻ ՄԵՐ. ՆՈՐՈՒՄԻՐ (MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER.)

Գլխաւոր միջերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Եւ Երեւանի Բարիկ ու Կիւտ Եօրք: Կը վաճառուի ամեն սափրիչներու, անոյշ իւղա-գործներու եւ անգղիացի դեղագործներու քով:

Կը գտնուի Ն. եւ Ժ. Գանգիւր եղբայրք բրիտանական դեղարանը, Բերա, Մեծ փողոց. Էտմընտ Գարուան. Անգլիական միջերանոց, Նիւքսթը Գալտըրըմ. եւ Իգիտոր Լազանտէլլա 433, Բերա Մեծ փողոց:



## ՀԵՐՈՒՆԵԿԵՆ ՆՈՐՈՒՄԻՐ

ԳԵՂԵՑԿԵՐՈՒՄՈՂ ՄԵՐՍՆՈՑ ԳՈՅՆԸ, ՄԻՇՏ

ՆՈՐՈՒՄԻՐ, ՄԻՇՏ ԹԵՐՍՆՈՑ

Ընդամուտն մը փորձը պիտի համոզէ ամեն Տիկին թէ որչափ գերազանց է այս ուրիշ ամեն հեղանիւթներէ եւ բազմաթիւ փոշի-ներէ: Ընտելն անգամ գոյ ծածկելով ալ, որ քանի մը վայրկեանի գործ է, պիտի տեսնուի իսկոյն որ երեսը, վեղը, թեւերը եւ ձեռքերը պիտի առ-նուն անոյշ փափկութիւն մը եւ մարմարիտի փայլ. հանդերձ շուշանի եւ վարդի գունով եւ բուրմամբ: Սպորնի գրգռիչ յատկութիւնները կը հանգարտեցունէ: Ընհետ կ'ընէ մորթի սեւութը, երեսի եւ ձեռքի ցանկերը, արեւոյ-րուքը, եւ ուրիշ ամեն բրտութիւն եւ բծաւորութիւն: Եւ աս ամեն բանով անկարելի կ'ընէ մասնաւոր թէ արհեստով գեղեցկացուած է:

Գլխաւոր միջերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Եւ Երեւանի Բարիկ ու Կիւտ Եօրք: Կը վաճառուի ամեն սափրիչներու, անոյշ իւղա-գործներու եւ անգղիացի դեղագործներու քով:

Կը գտնուի Ն. եւ Ժ. Գանգիւր եղբայրք բրիտանական դեղարանը, Բերա, Մեծ փողոց. Էտմընտ Գարուան. Անգլիական միջերանոց, Նիւքսթը Գալտըրըմ. եւ Իգի-տոր Լազանտէլլա 433, Բերա մեծ փողոց:



ԿԵՆՏՐՈՆ, ԱՃՈՒՄՆ Ե ԳԵՂ ՄԱԶԵՐՈՒ:

## ՄԵԼԻՐՈՑ

ՄԵԼԻՐՈՒ ՄԻՇ ԼԵՏԻՆ ՆՈՐՈՒՄԻՐ

Իրապէս իրենց առջին թարմ գոյնին կը դարձունէ ձերմըկած կամ գունաթափ մազերը. Կը դադրեցունէ անոնց թափելը. Կը մաքրէ գլուխը, կը վերջացունէ թեփը, ու մազերուն նոր կեանք, աճումն, փայլ ու գեղեցկութիւն կուտայ:

Կը վաճառուի երկու չափով՝ մեծ շեշերու մէջ: Գլխաւոր միջերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Եւ Երեւանի Բարիկ ու Կիւտ Եօրք:

Կը գտնուի Ն. եւ Ժ. Գանգիւր եղբայրք բրիտանական դեղարանը, Բերա, Մեծ փողոց. Էտմընտ Գարուան, Անգլիական միջերանոց, Նիւքսթը Գալտըրըմ. եւ Ի-գիտոր Լազանտէլլա 433, Բերա Մեծ փողոց: